ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՇՀԱՊՁԲ-10/11-1

ք. Երևան 20-ը հունիսի 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Նարնիկ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ն. Նիկողոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված № 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի № 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված № 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի № 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ սույն պայմանագրով նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ

գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի №№ 1, 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 3,862,042.49 (երեք միլիոն ութ հարյուր վաթսուներկու հազար քառասուներկու ամբողջ քառասունինը հարյուրերորդական) ՀՀ դրամ:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված № 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 4):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ապրանքը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների

կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի №№ 1, 2, 3, 4 և 4.1 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿԾ և ԶԲ վարչությունը:**

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀպաշտպանությանն նախարարություն	«ՆԱՐՆԻԿ» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի5	ք. Երևան, ԱվանՎՇ, Նարեկացի 54/9
ՀՀՖՆաշխատակազմի	«Կոնվերսբանկ»ՓԲԸ «Ավան» մ/ճ
գործառնականվարչություն	Հ/հ 1930051066800100
Հ/հ 900011117034	ՀՎՀՀ 00888893
ՀՎՀՀ 02703824	Տնօրեն
ՀՀպաշտպանության նախարարության	
ՆՏԱ դեպարտամենտի տնտնՊԺԿ	
ՍՊԱՐԱՊԵՏՅԱՆ	ԵՂԻԿՈՂՈՍՅԱՆ

Հավելված № 1
№ ՇՀԱՊՁԲ-10/11-1 պայմանագրի

ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Անվանումը	տեխնիկական բնութագրերը
1.1	Արաքար հաստոցի, կարծր մետաղի Φ 250x75x 25	Նախատեսված լեգերացված և կարծր մետաղներ սրելու և հղկելու համար: Արտաքին տրամագիծը 250մմ, անցքի տրամագիծը 75մմ, հաստությունը ոչ ավել 25 մմ-ից:
1.2	Մետաղ կտրող սկավառակ Φ 125 x22 x2 մմ	արտաքին տրամագիծը125մմ, անցքի տրամագիծը 22մմ,հաստությունը2 մմ
1.3	Մետաղ կտրող սկավառակ, հաստոցի Φ400x 32x3մմ	նախատեսված մետաղահատ հաստոցի համար: Արտաքին տրամագիծը 400մմ, անցքի տրամագիծը 32մմ, հաստությունը 3մմ
1.4	Սայլակի ռետինե անիվ	Անիվի վրա ամրացրած ռետին, առանց օդային պարկի:Տրամագիծը ռետինով 620մմ, հաստությունը 70մմ
1.5	Պոլիէթիլենային խողովակների զոդման սարք	Նախատեսված պոլիէթիլենային կամ պոլիպրոպիլենային խողովակները հալեցման եղանակով միմյանց միացնելու համար: Լրակազմի մեջ պետք է լինի խողովակի մկրատ 1 հատ: Խողովակի հալեցնողները՝ 20մմ -1հատ, 25մմ-1հատ, 32մմ-1հատ, 40մմ-1հատ, 50 մմ-1հատ, 63մմ-1հատ
1.6	Վերելակի մարտկոց (հիմնային)	Մարտկոցը՝ հիմնային, չափսը՝150 x 95x65մմ, կշիռը՝ 1740 գր. հաստությունը՝ 7Ա/Լամ, լարումը12վ, արտադրությունը՝ ոչուշ 2016թ-ից
1.7	Սոսինձ սիլիկոն	Սոսինձ անգույն,սիլիկոնային և քացախաթթվային միացություն:Օգտագործումը հիդրոմեկուսացման նպատակով, սրվակի տարողությունը 70մլ
1.8	Սոսինձ Ռոմա - բոնդ	Պոլիմերային սոսինձ նախատեսված ապակե, պլաստմասե, փայտյա և այլ իրեր միմյանց սոսնձելու համար: Սոսնձի հետ պետք է լինի աերոզոլային ակտիվացուցիչ համապատասխան սրվակով: Սոսնձի սրվակի տարողությունը՝65գր.ակտիվացուցիչի տարողությունը՝ 200մլ
1.9	Խոտհնձիչ մեքենայի դանակ	Դանակը՝ պատրաստված կոփված մետաղից համապատասխան անցքերով: Երկարությունը 500մմ-550մմ, լայնությունը 56մմ, հաստությունը 3 մմ
1.10	Բազկաթոռի նիկելապատ խաչուկներ	Պատվանդանը հնգաթև, ոտքերը մետաղական, նիկելապատ, յուրաքանչյուր թևի երկ. 390 մմ, լայն. 50մմ,թևերը առանց հոլովակների (роник)
1.11	Մետաղական շերտ 25x3մմ	Նյութը՝ Խ45 պողպատից, լայնությունը՝ 25մմ, հաստությունը 3մմ:
1.12	Ալյումինե դռների մոլակներ	Մոլակը ՅԱՊ համձուլվածքից, երկարությունը 220մմ, լայնությունը 21մմ, բացվող ձողի երկարությունը 230մմ:Ամրացումը դռանը 2 պտուտակով
1.13	Ոռոգման ցանցի ցայտիչներ	Աշխատանքը 1.5կգ/սմ/քառակուսի Ճնշման տակ ավտոմատ կարգավորվող,0-360 աստիճան պտտման տիրույթով: Աջ և ձախ կողմերի ջրից ցփնումը մինչև 15 մետր տրամագծով և ընդհատումներով: Միացումը խողովակաշարին D15մմ արտաքին տրամագծով:
1.14	Ոռոգման ցանցի ցայտիչների գլխիկներ	Գլխիկը պլաստմասե 3/8 ներքին պարույրով,տրամագիծը 20մմ, բարձրությունը 21մմ,0-360 աստիճան կարգավորվող:
1.15	Պլաստմասե տարաներ (ծաղիկների համար)	Շագանակագույն պլաստմասե տարաներ նախատեսված ծաղիկների համար:200x200x500 և 180 x180 x 150մմ չափի,հաստությունը 3մմ, տակդիրով և ոտքերով:
1.16	Ջերմամշակված մետաղյա լար Φ-4	Մետաղալարի հաստությունը 4մմ,ջերմամշակված
1.17	Լոգարանի ցնցուղի գլխիկներ	Միացումը ջրախառնիչների ճկուն խողովակին D15մմ արտաքին պարույրով և սիլիկոնե տափողակով,ամբողջությամբ պլաստմասե:Ցնցուղի տրամագիծը ոչ պակաս100մմ:
1.18	Անկյունակ խառատի ալյումինե 400x200մմ չափի	Անկյունը 90 աստիճան,ալյումինե,մեկ կողմը 400մմ,մյուս կողմը 200մմ, հաստուտյունը 1.0մմ
1.19	Պտուտակներ տարբեր	Պտուտակը՝ քրոմապատ, չժանգոտվող աստղաձև գլխիկով, գայլիկոնաձև ծայրով 4x25-4x75մմ ներառած բոլոր չափերը
1.21	Աղբաթիակ և ավել պլաստմասե պոչով	Պոչի եկարությունը 700մմ,տրամագիծը 23մմ, աղբաթիակի բերանի լայնությունը 220մմ, թիակի բարձրությունը 250մմ: Ավելի պոչի երկարությունը 650մմ, ավլող մասի մազիկները արհեստական,չափը200x11x40մմ
1.22	Ջրախառնիչի պլաստմասե միջուկ	Միջուկը պլաստմասե,պտտումը աջ և ձախ կողմ, 45 աստիճանով:Գլանաձև,ոչպակաս Φ35x23x23x10մմ չափերի,բռնակը ոչպակաս 9x9x20մմ

1.23	Խառատային հաստոցի կտրիչներ տարբեր	Կտրող մասը կարծր համաձուլվածքից (победит), պղնձաեռով զոդված կտրիչի ծայրին: Կտրիչի չափերը՝ 120x15x20մմ
1.24	Մուտքերի ռետինե գորգեր	Արտաքին մասը՝ տարբեր գույների մազիկներ՝ սոսնձված ռետինե հիմքին:Գորգերի հաստությունը ոչ պակաս 3մմ-ից: Չափսերը ըստ անհրաժեշտության
1.25	Շոգեբաղնիքի էլ. ջերմային տաքացուցիչ 220վ, 2.64կվտ	Լարումը220վ,հզորությունը2640վտ,չոր միջավայրում աշխատող,տաքացվող հաղորդալարը՝ նիքրոմ
1.26	Չիլլերի ջերմափոխանակիչի օդամղիչ D-550	Լարումը 220վ,օդամղիչի տրամագիծը 550մմ,թևիկների քանակը 4 հատ, հզորությորնը .....
1.27	Օդափոխության համակարգի էլեկտրամեխանիկական փոխանջատիչ	3SA8-BD21մակնիշի կամ համարժեք, հզոր. 10Ա, 240վ, պաշտպանվածությունը՝ IP=67
1.28	Բուրգաձև երդիկների երկտակ ապակե փաթեթ	Փաթեթը՝(տեղադրումով) ապակյա, մեկ երեսը 6մմ հաստությամբ,միկողմը մգեցված, մյուս կողմը հաելապատ: Երկրորդ երեսը՝ 6մմ հաստությամբ, սովորական թափանցիկ ապակի:Ամբողջ փաթեթ ներառված ալյումինե շրջանակի մեջ
1.29	Ջրի ավտոմատ փական 1/2	Նախատեսված միզամանների համար: Աշխատանքը կոճակի սեղմումով, ջրի արտահոսքից հետո փականը ավտոմատ անջատվում է: Միացումը ջրագծին 1/2 արտաքին պարույրով
1.30	Ամերիկանկայով փական 3/4	Փականի միացումը ջրագծին 3/4 պարույրով, միացման ծայրերը լատուն: Փականը չժանգոտվող քրոմապատ <ՋԱԿՈՄԻ> կամ համարժեք
1.31	Ամերիկանկայով փական 1	Փականի միացումը ջրագծին 1 պարույրով,միացման ծայրերը լատուն, փականը չժանգոտվող քրոմապատ <ՋԱԿՈՄԻ> կամ համրժեք
1.32	Ամերիկանկայով փական 1 1/4	Փականի միացումը ջրագծին 1 1/4 արտաքին պարույրով, միացման պարույրները լատունե, չժանգոտվող, քրոմապատ <ՋԱԿՈՄԻ> կամ համարժեք
1.33	Գազ սառնագեն R-22	CHCeF 2 կամ քլորից ֆլորմեթան, նախատեսված սառը օդ մատակարարող ագրեգատների համար: Տարան մետաղական, գլանաձև: Բարձրությունը 350մմ,տրամագիծը 180մմ, փականով, մեկտարայի տարողությունը 13.6 կգ
1.41	Խոնավազերծող ռետինե սրբիչ 640x430x2մմ	Սրբիչի օգնությամբ տարբեր մակերեսներից ջրի կաթիլների կամ խոնավության զերծում: Սրբիչը սինթետիկ գործվածքից 660*430*2մմ չափի, տեղավորված կիսակլոր, տեղավորված 250*70 չափի սարայի մեջ գործարանային փաթեթավորմամբ:
1.42	Պարալոն ծակոտկեն 2000x1000x50մմ	Մեկ կտորի չափերը 2000*1000*50մմ
1.43	Քառաշերտ ռետինե խողովակ	Խողովակի ներքին տրամագիծը 20մմ,խողովակի ռետինը քառաշերտ գործվածքով նախատեսված 1-60 C ջրի ջերմաստիճանի,25 բարձր ճնշման համար: Խողովակը արտաքինից պատված կարբոնատային շերտով:
1.44	Վերելակի լուսադիոդային լամպեր 3վտ 12վ	Հզորությունը 3 վտ,220վ,երկոտանի,բաղկացած՝ 3 հատ յուրաքանչյուր 1վտ հզորությամբ լուսադիոդային լամպերից, իրանը50մմ, փաթեթավորումը ստվարաթղթե, գործարանային
1.45	Լուսամփոփ լուսադիոդային լամպ 3վտ 12վ	Լամպը երկոտանի G 4 կոթառի համար,հզորությունը '3 վտ, լարումը 12վ, գունային ջերմաստիճանը 30-3000K, արձակած գույնը սպիտակ: Լամպը գլանաձև Φ25*10 չափի:Փաթեթավորումը գործարանային, ստվարաթղթե տուփով և համապատասխան գրառումներով:
1.46	Լամպ լուսարձակ շիկացման թելիկով	Հզորությունը 500վտ; 220վ; երկգլխանի; երկ. 124մմ; տրամագիծը 10մմ; շիկ. թելիկի երկ.-80մմ; փաթեթավորում գործարանային 17x17x125մմ, ստվարաթղթե տուփի մեջ
1.47	Լուսադիոդային լուսարձակ 210-21E	Հզորությունը 50վտ,լարումը 220վ,լուսային հոսքը 4500 լյումեն,ջերմաստիճանը 6400 կելվին, արձակած լույսի գույնը՝ սպիտակ,չափը 285*230*200,փաթեթավորումը գործարանային
1.48	Լուսադիոդային լամպեր լարման տրանսֆորմատոր 220x12	Նախատեսված լուսադիոդային լամպերով ջահերի համար:Տրանսֆորմատորի մուտքային լարում 220վ, ելքային 12վ, հզորությունը 30վտ,2.5 Ա, պաշտպանվածությունը IP-67:Սուփր 175*30*20մմ չափի, փաթեթավորումը գործարանային
1.49	Լուսադիոդային լուսատու 48վտ	Լուսատուի աշխատանքը պայթունավտանգ միջավայրում պետք է լինի IP=67: Հզորությունը 48վտ, լարումը 220վ, լուսային հոսքը 3500-4000 լյումեն,ջերմաստիճանը6400 կելվին,արձակած լույսը սպիտակ 1260*110*80մմ չափի, փաթեթավորումը գործարանային
1.50	Մոնտաժային հաղորդալար ՊԳՎ 1x1.5	Հաղորդալարի տիպըՊԳՎ1*1.5, հաղորդալարը պղնձյա՝1 ջիղից:Հաստությունը 1.5մմ 2,պատված պոլիվորային ծածկույթով
1.51	Էլեկտրական հարվածող գայլիկոն	Դռել-պերֆերատոր, հզորությունը 1050-100վտ,լարումը 230վ,արագությունը պարապ ընթացքի ռեժիմում-500-800պտույտ, հարվածի ուժգնությունը 8-9 ջոուլ:Կշիռը 5-7 կգ: Լրակազմի մեջ – գայլիկոն 2հատ,պիկ-1 հատ: Ամբողջը տեղավորված պլաստմասե արկղի մեջ,փաթեթավորումը գործարանային, ստվարաթղթե
1.52	Խողովակի վրա ½"x3/4"x1 արտաքին պարույրհանելու սարք (трещетка)	Մետաղական խողովակների վրա ½,3/4,1 չափերի արտաքին պարուրակհանելու սարք
1.53	Անկյունային շաղափիչ 850վտ Φ-115մմ	Լարումը 220վ,հզորությունը 850վտ,50 հց: Արագությունը պարապ ընթացքի ժամանակ 1000 պտ/րոպե:Կտրող սկավառակի

		տրամագիծը 115մմ, փաթեթավորումը գործարանային, ստվարաթղթե, պլաստմասե արկղի մեջ (угловаяшлифовальнаямашина)
1.54	Դռան փականի միջուկ	Միջուկի երկարությունը 80մմ,լատունե,բանալիների քանակը ոչ պակաս 4 հատից: փաթեթավորումը գործարանային,ստվարաթղթե արկղի մեջ
1.55	Յուղ <SUNISO>-3GS կամ համարժեք	Նախատեսված տառնարանային կոմպրեսորների յուղի ամենամյա փոխարինման և լրացման համար: Աշխատում է մինչև 100 F միջավայրում: Տարան պլաստմասե, տարողությունը 4 լիտր, տարայի վրա նշված լինի արտադրության և պիտանելիության ժամկետները
1.56	Յուղի զտիչ Castell 4490/A կամ համարժեք	Յուղի մեջ եղած տարբեր մասնիկները 100%-ով որսող ծակոտկեն ստվարաթղթե զտիչ: Զտիչը կոնսերվացված մետաղական թիթեղից գլանաձև տարայի մեջ: Տարայի չափերը 150x100մմ

Ծանոթություն *Ապրանքները պետք է մատակարարվեն վաճառողի միջոցներով՝ ՀՀ ՊՆ ԿԾ և ՀԲՎ կենտրոնական պահեստ՝ ք. Երևան, Արշակունյաց 135:*

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Տնօրեն

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ՆԱՐՆԻԿ» ՍՊԸ

Ն. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Հավելված № 2
№ ՇՀԱՊՁԲ-10/11-1 պայմանագրի

ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2017Թ.

Հ/հ	Անվանումը	Չ/մ	Քանակ	Միավորի գին	Ըստ եռամսյակների		Գումար
					II	III	
	Շինարարության մեջ օգտագործվող զանազան այլ ապրանքներ						
1.1	Սրաքար հաստոցի, կարծր մետաղի Φ 250x75x 25	հատ	1	27,000.00	1		27,000.00
1.2	Մետաղ կտրող սկավառակ Φ 125 x22 x2 մմ	հատ	10	1,200.00	10		12,000.00
1.3	Մետաղ կտրող սկավառակ, հաստոցի Φ400x 32x3	հատ	4	7,100.00	4		28,400.00
1.4	Սայլակի ռետինե անիվ	հատ	3	8,800.00	3		26,400.00
1.5	Պոլիէթիլենային խողովակների զոդման սարք	լրակ.	1	34,000.00	1		34,000.00
1.6	Վերելակի մարտկոց(հիմնային)	հատ	4	11,900.00	4		47,600.00
1.7	Սոսինձ <Սիլիկոն>	սրվ.	23	650.00	23		14,950.00
1.8	Սոսինձ<Ռոմա-Բոնդ>	սրվ.	7	1,400.00	7		9,800.00
1.9	Խոտհնձիչ մեքենայի դանակ	հատ	3	20,700.00	3		62,100.00
1.10	Բազկաթոռի նիկելապատ խաչուկներ	հատ	10.0	11,600.00	10.0		116,000.00
1.11	Մետաղական շերտ 2,5x3մմ	կգ	5	480.00	5		2,400.00
1.12	Ալյումինե դռների մղլակներ	հատ	10	2,450.00	10		24,500.00
1.13	Ոռոգման ցանցի ցայտիչներ	հատ	4	16,500.00	4		66,000.00
1.14	Ոռոգման ցանցի ցայտիչների գլխիկներ	հատ	100	1,850.00	100		185,000.00
1.15	Պլաստմասե տարաներ(ծաղիկների համար)	հատ	70	2,750.00	70		192,500.00
1.16	Ջերմամշակված մետաղյա լար Φ 4	կգ	25	1,400.00	25		35,000.00
1.17	Լոգարանի ցնցուղի գլխիկներ	հատ	20	1,150.00	20		23,000.00
1.18	Անկյունակ խառատի ալյումինե 400x200մմ չափսի	հատ	2	3,500.00	2		7,000.00
1.19	Պտուտակներ տարբեր	հատ	3,800	9.00		3,800	34,200.00
1.21	Աղբաթիակ և ավել պլաստմասե,պոչով	հատ	10	2,600.00		10	26,000.00
1.22	Ջրախառնիչի պլ. Միջուկ	հատ	30	1,150.00		30	34,500.00
1.23	Խառատային հաստոցի կտրիչներ տարբեր	հատ	15	3,700.00		15	55,500.00
1.24	Մուտքերի ռետինե գորգեր	քմ	14	14,900.00		14	208,600.00
1.25	Էլեկտրաջերմային տաքացուցիչ220վ, 2,64 կվտ	հատ	12	35,500.00	6	6	426,000.00
1.26	Չիլլերի ջերմափոխանակիչի օդամղիչD-550	հատ	4	79,500.00	2	2	318,000.00
1.27	Օդափոխության համակարգի էլ. մեխ. փոխանջատիչ	հատ	30	2,750.00	15	15	82,500.00
1.28	Բուրգաձև երդիկների երկտակ ապակե փաթեթ տեղադրումով	քմ	4	64,500.00	4		258,000.00
1.29	Ջրի ավտոմատ փական 1/2"	հատ	6	19,400.00	6		116,400.00

1.30	Ամրիկանկայով փական 3/4"	հատ	10	3,650.00	10		36,500.00
1.31	Ամրիկանկայով փական 1"	հատ	5	6,700.00	5		33,500.00
1.32	Ամրիկանկայով փական 1 1/4"	հատ	2	9,850.00	2		19,700.00
1.33	Գազ սառնագեն R-22	կգ	68	4,800.00	68		326,400.00
1.41	Խոնավազերծող ռետինե սրբիչ640x430x2մմ	հատ	20	1,750.00	20		35,000.00
1.42	Պարալոն ծակոտկեն2000x1000x50մմ	հատ	5	7,800.00	5		39,000.00
1.43	Քառաշերտ ռետինե խողովակ	մ	20	2,150.00	20		43,000.00
1.44	Վերելակի լուսադիոդային լամպեր 3վտ,12վ	հատ	20	2,900.00	20		58,000.00
1.45	Լուսամփոփ լուսադիոդային լամպ 3վտ,12վ	հատ	100	1,500.00	100		150,000.00
1.46	Լամպ լուսարձակի շ/թելիկով	հատ	15	1,600.00	15		24,000.00
1.47	Լուսադիոդային լուսարձակ210-21E	հատ	2	44,500.00	2		89,000.00
1.48	Լուսադիոդային լամպերի լարման տրանսֆորմատոր220x12	հատ	20	5,700.00	20		114,000.00
1.49	Լուսադիոդային լուսատու 48վտ	հատ	5	28,000.00	5		140,000.00
1.50	Մոնտաժային հաղորդալար ՊԳՎ 1x1,5	մ	208.2	134.45	208.2		27,992.49
1.51	Էլեկտրական հարվածող գայլիկոն	հատ	1	85,000.00	1		85,000.00
1.52	Խողովակի վրա 1/2"x3/4"x1" չափսի արտաքին պարոպրոհանելու սարք (трещетка)	հատ	1	30,000.00		1	30,000.00
1.53	Անկյունային շաղափիչ 850վտ, 115մմ Φ	հատ	1	37,000.00	1		37,000.00
1.54	Դռան փականի միջուկ	հատ	10	3,700.00	10		37,000.00
1.55	Յուղ <SUNISO>-3GS կամ համարժեք	լիտր	4	4,400.00	4		17,600.00
1.56	Յուղի զտիչ Castell 4490/A կամ համարժեք	հատ	4	11,500.00	4		46,000.00
	Ընդամենը						**3,862,042.49**

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տնօրեն

ՎԱՃԱՌՈՂ
«ՆԱՆԻԿ» ՍՊԸ

Ա. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Հավելված № 3
№ ՇՀԱՊՁԲ-10/11-1 պայմանագրի

ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2017Թ. *

Չ/հ	CPV կոդ	Անվանումը	Չ/մ	Քանակ	Միավորի գին	Նախատեսվում է ֆինանսավորել ըստ ամիսների /ոչ ուշ քան 25/12/2017թ./							Գումար
						VI	VII	VIII	IX	X	XI	XII	
1.	44423680 /16/4/1	*Շինարարության մեջ օգտագործվող զանազան այլ ապրանքներ*	դրամ	1	3,862,042.49	3,108,944.2	3,862,042.49	3,862,042.49	3,862,042.49	3,862,042.49	3,862,042.49	3,862,042.49	3,862,042.49

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Տնօրեն

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ՆԱՐՆԻԿ» ՍՊԸ

Ն. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

§ ¦§ ¦20 Ã.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի № եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

№	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված № 4.1
№ ՇՀԱՊՁԲ-10/11-1 պայմանագրի

ԱԿՏ №

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ——————————ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
——————————ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ——— -ին կնքված № ————
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ———— -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

———————————— ————————————
ազգանուն, անուն ազգանուն, անուն

———————————— ————————————
ստորագրություն ստորագրություն